ների քոյրը, Քրդի քրոջ աղջիկը, որի որդին և Թոռնորդին Հաղբատի նշանաւոր եպիսկոպոսները եղան Յովհաննէս Ա. և Դ.: Ու-



(Պատկեր 10)

րիչ իշխանական տոհմեր եւ գերեզմանատուն ունէին, շինարարութեամբ կամ նուիրատուութեամբ կապուած Հաղբատի հետ, ինչպէս Դէսումեանք, Ուքանանք, Վաղուտեանք եւ նոյն իսկ հեռաւոր հայ Օրբէլեանք:

Այսպիսի հովանաւորութեամբ, բնականաբար, Հաղբատը պէտք է հետզհետէ բարձր դիրք ձեռք բերէր մեր եկեղեցական նուիրապետութեան հոգեւոր կեանքի մէջ. Ուռհայեցին և Գանձակեցին պատմում են,